Լոր

Բնակչություն՝ 355

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 134 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 30 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1680 մ,

Գյուղը հիշատակվում է միջին դարերից և մտնում է Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի մեջ: Լորն 1-ին անգամ հիշատակվում է 839թ-ի տաթևի վանքի կալվածագրում և ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր /դրամ/ հարկ, իսկ 1781թ.-ի հարկացուցակով վճարվող պտղի հարկը կազմում էր 5500 դահեկան: Եղել է գրչության կենտրոն: տարածքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստող է գտնվում «Սպիտակ խաչ» կամ «Լորիկի խաչ» խաչքար-կոթողը/1871թ/:
Խաչքարը կանգնեցվել է թշնամու դեմ կռվում զոհված Լոր իշխանի գերեզմանին: Գյուղից հարավ գտնվում է «Ծառու» Հովհաննես թաղակապ եկեղեցին /1686/: Գյուղամիջին գտնվում են ս. Գևորգ Եկեղեցին՝ կառուցված Խոջա Պողոսի կողմից 1666թ. ս. Աստվածածին եկեղեցին: Պահպանվել է նաև այն դպրոցը, ուր 1915-16թթ. դասավանդել է Ակսել բակունցը: Այստեղ ծնվել է հայ մեծ գրող Համո Սահյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 131 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 279գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 496 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 422:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3361 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3265 հա, որից՝
- վարելահող՝ 134 հա, բազմամյա տնկարկ՝ 2 հա, խոտհարք՝ 10 հա, արոտ՝ 2005 հա, այլ հողատեսք՝1113 հա
- բնակավայրերի հողեր՝ 32 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 2 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4 հա,
- անտառային հողեր՝ 50 հա, որից անտառածածկ՝ 50 հա
- ջրային հողեր՝4 հա